

# ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՈՒՐՍ

Ուսմանական ծրագրի նպատակն է բազային գյուղատնտեսական կրթության հիման վրա կիրառական ագրարային մենեջմենթի մասնագետների (Master of Science) կրթելը ովքեր իրենց գործնական և տեսական գիտելիքներով կարող են ինքնուրույն և մեծ պատասխանատվությամբ բազմաթիվ մասնագիտական առաջադրանքներ կատարել և խորհրդատվություն իրականացնել գյուղատնտեսական ձեռնարկություններում, մասնագիտական կրթական կառույցներում, մասնագիտական կազմակերպություններում և միջազգային նախագծերում:

## ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՆՈԱՆԿԱՐՆԵՐԸ

- » Գործունեություն գյուղատնտեսական ձեռնարկություններում, ագրոարդյունաբերական ոլորտում, հատկապես միջազգային ձեռնարկություններում և արտասահմանյան մասնաձյուղերում
- » Գիտամանկավարժական գործունեություն համալսարաններում և քոլեջներում
- » Գործունեություն գյուղատնտեսության կառավարման, խորհրդատվական և ծառայությունների մատուցման բնագավառում
- » Համագործակցություն միջազգային ծրագրերում
- » Առաջադրանքներ կիրառական գիտահետազոտական հաստատություններում

# ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

» Միջազգային մագիստրոսական կուրսը 2004թ.ին հավատարմագրվել է ACQUIN-ի միջազգային հավատարմագրման կենտրոնի կողմից՝ առանց նախապայմանների: 2016թ.ին հավատարմագրման ժամկետը երկարաձգվել է մինչև 2023թ.:



» Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) և դոնորների ասոցիացիայի կողմից կազմակերպված "Գերմանական գիտություն 2008" մրցույթում „Ագրարային մենեջմենթ“, միջազգային մագիստրոսական կուրսին շնորհվել է գերմանական համալսարանների միջազգային մագիստրոսական կուրսերի 10 լավագույնների տիտղոսը:

## Գնահատման կարևոր նախապայմաններն են՝

- նորարար ընդհանուր հայեցակարգը, ուսումնական ծրագրերի բարձր որակը,
- միջազգայնացման բարձր մակարդակը, ուսուցման բարձր որակը, գիտական ղեկավարման մշակված հայեցակարգը,
- շրջանավարտների նկատելի հաջողությունները:



# ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ  
ima.lt@hswt.de

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ  
Հեռ.: +49 9826 654-114  
studienberatung.triesdorf@hswt.de

ՖԱԿՈՒՆԵՏ  
Վայինշտեֆան-Թրիսդորֆ Կիրառական Գիտությունների Համալսարան Գյուղատնտեսության ֆակուլտետ Հասցեն.  
Markgrafenstraße 16, 91746 Weidenbach  
Հեռ.՝ + 49 98 26 / 654-0  
lt@hswt.de  
www.hswt.de/mam



# ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՈՒՐՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵԶՄԵՆԹ (MSC) ԹՐԻՍԴՈՐՖ



# ԻՆՉ ԵՆՔ ՄԵՆՔ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ

Բազմակողմանի մասնագիտական կրթություն՝ „Master of Science (M.Sc.)“, ակադեմիական աստիճանով

- » Պրակտիկ ուղվածությամբ կրթություն, որը տալիս է բազմակողմանի մասնագիտական և անձնական հմտություններ և որը դրական է գնահատվում պոստենցիալ գործատուների կողմից
- » Տեխնիկայալից հազեցած կրթական տարածք և մուտք ժամանակակից տեղեկատվական տեխնիկաների և տեխնոլոգիաների տիրույթ
- » Ինտենսիվ խորհրդատվություն՝ տվյալ երկիր մուտքի արտոնագրի, բնակարանի ապահովման և պրակտիկայի համար
- » Միջազգային ուսանողների մեծ համայնք (մոտ 15 երկրների)՝ բազմազան նախաձեռնություններով
- » Ապրել և ուսանել գյուղատնտեսական գեղատեսիլ վայրում
- » Աջակցություն կրթաթոշակներ ստանալու հարցում

## ՏԱԱԸ ՀԻՄՆԱԿՈՐ ՊԱՏՃԱՌՆԵՐ ԹՐԻՍԴՐՈՒՅՈՒՄ ՈՒՍԱՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ

- » Միջազգային ճանաչում ունեցող գյուղատնտեսության, սննդի և շրջակա միջավայրի բնագավառում մասնագիտացված և ժամանակակից տեխնիկական հազեցվածությամբ համալսարան Թրիսդրոֆի ագրարային ուսումնական կենտրոնում
- » Անհատական գիտական ղեկավարում հենց սկզբից, սերտ կապ ուսանողների և դասախոսների միջև
- » Աշխատանք փոքր խմբերում, թափանցիկ համալսարան
- » Աջակցություն ուսումն ավարտելուց հետո աշխատանքի տեղավորման հարցում
- » Գերազանց հնարավորություններ միջազգային աշխատաշուկայում
- » Նեղ մասնագիտական կիրառումներ և մոտեցումներ պրակտիկայի, ծրագրերի և տնտեսական կապերի միջոցով
- » Ուսանողների մեծ նվիրվածություն համալսարանում և աշխատանքային ոլորտում
- » Ուսման ընթացքում աջակցություն մատչելի կացության ապահովման հարցում
- » 30-ից ավելի համալսարանների հետ համագործակցություն

# ՄԵՐ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ (ՊՐԱԿՏԻԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԻՍԱՄՅԱԿ)

- » Գյուղատնտեսական բարձրագույն կրթություն որևէ համալսարանում (նվազագույնը „լավ“, գնահատականով)
- » Գերմաներենի բավարար գիտելիքներ (B1 մակարդակ)
- » Պրակտիկ ուսումնական կիսամյակն անց է կացվում գյուղատնտեսական ուսումնական տնտեսություններում , համալրվում է համալսարանում չորս անգամ անցկացվող մեկ շաբաթյա դասընթացներով:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ

- » Պրակտիկ ուսումնական կիսամյակը պետք է լինի արդեն ավարտված (այլ արտադրական պրակտիկաները կարող են գրավոր դիմումի հիման վրա վավեր ճանաչվել քննական հանձնաժողովի կողմից)
- » Ուսման համար գերմաներեն լեզվի իմացության հաստատում:



# ՉԵՐ ՈՒՍՈՒՄԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		
ՍԵՄ.	Պարտադիր մոդուլներ	Ընտրովի պարտադիր
1.	Պրակտիկ ուսումնական կիսամյակը ուսումնական տնտեսությունում վավեր ճանաչված և համալսարանում չորս անգամ անցկացվող մեկ շաբաթյա դասընթացների մասնակցություն	
2.	- Բիզնես մենեջմենթ, - Արտադրության էկոնոմիկա, - Չեռնարկությունների վերլուծություն և վերահսկում, - Տնտեսագիտական ինֆորմատիկա (ներառյալ՝ սոցիոլոգիական հետազոտության էմպիրիկ մեթոդները)	Գնահատում և բալանսավորում, որակի և արտադրանքի մենեջմենթ, խորհրդատվական մեթոդիկա, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաներ, կոոպերատիվ ձեռնարկություններ, բանկային գործ, շուկայում մրցունակ տնտեսությունների համակարգ, ագրարային տեխնիկա, բուսաբուծություն, անասնաբուծություն
3.	- Չեռնարկությունների պլանավորում, - Ագրարային քաղաքականություն, - Միջազգային ագրարմարքեթինգի ռազմավարություն	Նեղ մասնագիտացում 1. Չեռնարկությունների խորհրդատվություն 2. Ագրարտեխնիկական և տնտեսագիտական խորհրդատվություն 3. Գյուղատնտեսական և տարածաշրջանային զարգացման հայեցակարգ 4. Տարածաշրջանային զարգացում <i>Միջազգային ագրոբիզնես (անգլերեն) կամ անգլերենը որպես օտար լեզու</i>
4.	Մագիստրոսական թեզ, ներառյալ՝ մագիստրոսական սեմինար, նախագծերի պլանավորում և գնահատում, արտադրական պրակտիկա	Միջազգային առևտուր, Կայուն էներգետիկ տնտեսություն

Որակավորում  
**Master of Science (MSc)**